

Տեղեկատվություն Վիճակագրական կոմիտեի պետական ծառայողների
տարեվերջյան պարզևատրումների մասին

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է, որ **պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց պարզևատրումը** կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված պարզևատրման ֆոնդից, **աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից**, տվյալ մարմնի նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի միջոցներից աշխատանքների փորձարարական կազմակերպման համար օպտիմալացված միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Հիմք ընդունելով հիշյալ օրենքի դրույթները՝ Կոմիտեին հատկացված **աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների հաշվին** տարեվերջին պարզևատրվել են Կոմիտեի աշխատակիցներից 317-ը՝ ընդամենը 33502.4 հազար դրամ: Հարկ է նշել, որ Կոմիտեում պարզևավճարները չեն գերազանցել օրենքով սահմանված թույլատրելի սահմանաչափը:

1) Կոմիտեի քաղաքացիական ծառայողներից մի քանիսը պարզևատրվել են մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափերով, իսկ մյուսները՝ պաշտոնային դրույքաչափի 35 տոկոսից մինչև 90 տոկոսի սահմաններում:

2) Կոմիտեի ինքնավար և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներն աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների հաշվին տարեվերջին պարզևատրվել են մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

Տեղեկացվում է նաև, որ Կոմիտեի ինքնավար և քաղաքացիական ծառայության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող անձանց եկամուտները հրապարակվում են Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պաշտոնական կայքում (www.ethics.am)՝ համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի: